ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն քաղաք Մասիս

Երկու հազար տասնվեց թվականի հունիսի իններին

Մի կողմից, ՀՀ Արարատի մարզի ՄԱՍԻՍԻ համայնքը, «այսուհետ՝ ***«ԿՈՂՄ-1»,*** ի դեմս համայնքի ղեկավարի լիազորված անձ ***Ռոբերտ Մարգսի Եղիազարյանի,*** ծնված՝ 30.05.1949թվականին, անձնագիր AH0261419, տրված 05.12. 2006թվականին 044-ին կողմից, հաշվառված՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 3 թաղ. 10 –րդ շենքի 8 բնակարանում (լիազորագիրը վավերացված է երկու հազար տասնվեց թվականի հունիսի իններին ՀՀ Արարատի մարզի ՄԱՍԻՍ համայնքի ղեկավար Ս. Հակոբյանի կողմից) և Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ ***«ԿՈՂՄ-2»,*** ի դեմս լիազորված անձ ***Հովիկ Հայդուկի Մարգսյանի,*** ծնված՝ 22.07. 1967թվականին, անձնագիր AF0488647, տրված 11.12. 2001թվականին 044-ի կողմից, վավերական է մինչև 11.12.2016թվականը, հաշվառված՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 2-րդ փողոցի թիվ 58 տանը (№18-1/16772-16 լիազորագիրը վավերացված է երկու հազար տասնվեց թվականի մայիսի երեսունմեկին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Գևորգյանի) մյուս կողմից, ***կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.***

1. Համաձայնագրի առարկան

1.1. Երկու հազար ինը թվականի մարտի տասնիններին ***կնքված,*** ՀՀ Մասիսի նոտարական տարածքի նոտար Աշոտ Վլադիմիրի Բարխուդարյանի կողմից հաստատված, սեղանամատյանում 593-ով գրանցված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.2 Պայմանագրի 1. 1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց /համաձայն տրամադրվող տարածքի հատակագծի հավելվածի, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է/, Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի, քաղաքապետարանի վարչական շենքի 2-րդ հարկում գտնվող 130,13/հարյուր երեսուն ամբողջ տասներեք հարյուրերորդական/քմ. տարածքը, այսուհետ՝ «Գույք», որպես գրասենյակ օգտագործելու համար:

Իրադրության հատակագիծը կցվում է սույն փաստաթղթին և կազմում սույն փաստաթղթի անբաժանելի մասը:

1.1.3. Պայմանագրի 3.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

3.1. Գույքի համար ամսական վարձավճարը սահմանվում է 33000(երեսուներեք հազար) ՀՀ դրամ::

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից:

3. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:

4. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի **Արարատ** տարածքային ստորաբաժանումում գործարքի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

«ԿՈՂՄ- 1»

ՀՀ Արարատի մարզի Մասիսի
քաղաքային համայնք
համայնքի ղեկավարի լիազորված անձ
Ռոբերտ Սարգսի Եղիազարյան

«ԿՈՂՄ-2»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ,
ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆ
լիազորված անձ
Հովիկ Հայդուկի Սարգսյան

Երկու հազար տասնվեց թվականի հունիսի իններին

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ ՄԱՍԻՍ նոտարական տարածքի նոտար *Արտաշես Գուրգենի Ասրյանի կողմից:*

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:Համաձայնագիրը ստորագրած իրավաբանական անձանց ինքնությունը, նրա գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 260 ով
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին »ՀՀ
օրենքների:

ՆՈՏԱՐ՝ *ԱՐՏԱՇԵՍ ԱՍՐՅԱՆ*

ՀՀ ՄԱՍԻՍ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ
РА МАСИС НОТАРИАЛ ТЕРРИТОРИЯ
RA MASIS NOTARIAL TERRITORY NOTARY PUBLIC
87716876